

**ՄՐՑՈՒՅԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ
ՄԻՆԻ ԱՅԳԻ**



2 Ինչու՞ են դպրոցական այգիները կարևոր

Դպրոցական այգիները մեծ ճանաչում են ստանում ամբողջ աշխարհում: Իրենց միջառարկայական և բազմոլորտային բնույթի շնորհիվ՝ դպրոցական այգիները նպաստում են առողջ սննդակարգի և դրա վերաբերյալ գիտելիքների զարգացմանը, շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը, կարող են փոխել սննդային վարքագիծը, ինչպես նաև ձևավորել կենսական հմտություններ: Դպրոցական այգիների երկարատև ազդեցությունը տարածվում է դպրոցից դուրս:



Դպրոցական այգիները կարևոր են դպրոցներին թարմ բանջարեղենով, մրգերով և կանաչեղենով ապահովելու հարցում: Դրանք ոչ միայն նպաստում են ավելի լավ և առողջ սննդակարգին, այլև կարող են ծառայել որպես կայուն եկամտի աղբյուր դպրոցների համար:

Ավելին, այգիները կարող են ծառայել որպես ուսուցման կարևոր հարթակներ: Փոքր երեխաները բաց են նոր գաղափարների համար և հեշտությամբ են նոր սովորություններ ձևավորում: Այգիներում աշխատելիս երեխաները ձեռք են բերում մի շարք գործնական հմտություններ, որոնք հետագայում կարող են օգտագործել ապրուստ ապահովելու և իրենց ինքնաբավությունը ամրապնդելու համար: Գյուղական շրջաններում աշակերտների մեծ մասն իրենց հետագա ապրուստը հոգում է գյուղատնտեսության միջոցով: Դպրոցների այգեպանների/ուսուցիչների միջոցով երեխաները կարող են ոչ միայն սովորել հող մշակել, սերմեր տնկել և բերք աճեցնել, այլ նաև ձեռք բերել տարրական գործարար հմտություններ:

Այգեգործության դասաժամերին երեխաները ստանում են գիտելիքներ բանջարեղենի և մրգերի օգտակարության մասին և հնարավորություն են ստանում զվարճանալ՝ իրենց ուտելիքն աճեցնելով դասընկերների հետ: Երեխաների ներդրած ջանքերը և ստացած տեղեկատվությունը հանգեցնում են նրան, որ աստիճանաբար փոխվում է նրանց սննդային վարքը և երեխաները սկսում են ավելի շատ միրգ և բանջարեղեն օգտագործել:

Ուսումնասիրություններն ապացուցել են, որ դպրոցական այգիները օգտակար են շրջակա միջավայրի համար: Նախ՝ այգեգործությունը սնունդ արտադրելու ամենահին և օրգանական ձևն է: Դպրոցական այգիների դեպքում սննդի արտադրությունը կազմակերպվում է բնական ռեսուրսների օգտագործմամբ՝ երեխաներին անվտանգ բերք ապահովելու համար: Բացի այդ՝ այգեգործության դասընթացների ժամանակ երեխաները սովորում են երկրի, ծառերի և բույսերի մասին, տեղեկություն ստանում դրանց խնամքի մասին, սովորում են շրջապատի, կենդանիների և միջատների մասին: Սա ստեղծում է պատասխանատվության զգացում շրջակա միջավայրի նկատմամբ:

Վերջապես, դպրոցական պարտեզները հիանալի գործիք են դպրոցները, ծնողներին,

համայնքները և համայնքային կազմակերպությունները միմյանց կապելու համար: Դպրոցները կարող են լրացուցիչ հնարավորություններ ստեղծել՝ ներգրավելով ծնողներին և համայնքները, որի շնորհիվ վերջիններս ավելի լավ պատկերացում կկազմեն դպրոցական այգիների և դրանց կարևորության մասին, կկարողանան տրամադրել օգնություն (երբեմն նաև մասնագիտական), ինչպես նաև ավելի պատրաստակամ կլինեն միջոցներ և ժամանակ տրամադրել դպրոցին: Ավելին, այգիները կարևոր են դպրոցական սննդի ծրագիրը խթանելու գործում:

Մասնակիցներ

ՀՀ հանրակրթական դպրոցներ

Ծրագրի երկարաժամկետ նպատակ

Դպրոցական սննդի ծրագրի վերաբերյալ իրազեկության բարձրացում և ազգային մակարդակում դպրոցական այգիների հիմնման խթանում:



Ծրագրի կարճաժամկետ նպատակներ

- Հրավիրել քաղաքականություն մշակողների ուշադրությունը դպրոցական այգիների կարևորության և դպրոցական արտադրանքի իրացման խնդրի վրա: Ներկայումս ոլորտում առկա են միայն նվազագույն իրավական կարգավորումներ, ուստի քաղաքականություն մշակողները պետք է հստակ պատկերացում կազմեն դպրոցական այգիների տնտեսական, կրթական և բնապահպանական օգուտների վերաբերյալ:
- Խթանել դպրոցական սննդի ծրագիրը: Խրախուսվելով ընդհանուր գործով՝ երեխաները ծնողներին կպատմեն, թե ինչպես են մշակում բույսերը և աճեցնում սեփական սնունդը: Տեսնելով երեխաների խանդավառությունը՝ ծնողները պատրաստ կլինեն ավելի շատ ժամանակ և միջոցներ ներդնել և ավելի շատ ներգրավվել դպրոցական սննդի ծրագրի բարելավման գործում:
- Չարգասել դպրոցական այգիների կրթական բաղադրիչը: Այգիները կրթության արդյունավետ հարթակ են, որոնք բարելավում են երեխաների ֆիզիկական և մտավոր առողջությունը, ինչպես նաև ուղղակիորեն նպաստում են գյուղատնտեսության վերաբերյալ նրանց գիտելիքների ավելացմանը և տարրական հմտությունների ձեռքբերմանը: Երեխաների համար այգեգործությունը ծառայում է որպես զվարճալի և ինտերակտիվ գործիք բույսերի մասին սովորելու և սեփական սնունդը աճեցնելու համար, ինչը, որպես արդյունք, փոխում է նրանց սննդային վարքը: Ավելին, շատ փոքր տարիքից երեխաները սովորում են բնական միջավայրի պահպանման կարևորության մասին:

Առաջադրանքը

Ակնկալվում է, որ մասնակիցները կտրամադրեն «Մինի այգի» ծրագրի նախագիծ, որը նրանք մտադիր են հիմնել տարրական դասարանների աշակերտների հետ:

Ծրագրի փաթեթը պետք է ներառի.

1. այգու լուսանկարներ, այգու հիմնադրման համառոտ պատմություն (գոյություն ունեցող այգիների դեպքում) և տնկելու համար նախատեսված մշակաբույսերի ընտրության բացատրություն,
2. միջառարկայական ուսուցման ծրագիր և շեշտադրված դասընթացներ: Ծրագիրը պետք է ներառի հետևյալ հարցերը.
 - Ինչպե՞ս են դպրոցները նախատեսում ներգրավել աշակերտներին:
 - Որո՞նք են դպրոցի կողմից ընտրված հիմնական թեմաները:
 - Որո՞նք են գործնական այն հմտությունները, որ ուսուցանվելու են աշակերտներին:
 - Որքա՞ն ժամանակ է նախատեսում դպրոցը տրամադրել ծրագրին:
 - Ինչպե՞ս են դպրոցները նախատեսում շարունակել այգու խնամքը:
3. երեխաների՝ այգու հիմնադրման և խնամքի բոլոր փուլերին մասնակցելն արձանագրող լուսանկարներ,
4. հավաքված բերքի լուսանկարներ,
5. երեխաների կողմից պատրաստված պարզ և առողջարար ուտեստի լուսանկարներ,
6. երեխաների կողմից գրված համառոտ շարադրություն՝ «Ինչպես ենք մենք օգտագործում մեր կողմից անցված բերքը դպրոցական սննդում» թեմայով,
7. կարճ տեսանյութերը (խմբագրված տեսահոլովակները) խրախուսվում են և կդիտվեն որպես առավելություն ընտրության գործընթացում **(մենք մասնագիտացված տեսանյութ չենք ակնկալում):**

Որակավորում

Մենք խրախուսում ենք դպրոցներին ստեղծել մինի այգի (մոտավորապես 5x10մ) տարրական դասարանների աշակերտների համար, որտեղ վերջիններս կարող են անցնել սեփական բերքը՝ լոլիկ, վարունգ, գագար, ճակնդեղ, հազար, կանաչիներ (մաղադանոս, գինձ, սամիթ, սոխ), բոդկ, ելակ, դդում և այլն: Այն դեպքերում, երբ դպրոցներն արդեն ունեն այգիներ, նրանք կարող են փոքրիկ հողակտոր տրամադրել դպրոցականներին՝ մշակման համար:

Ստանդարտներ, որոնց անհրաժեշտ է հետևել ծրագրի փաթեթը մշակելիս

1. Փաստաթղթերը/շարադրությունները պետք է ներկայացվեն Microsoft Word ֆայլերով՝ օգտագործելով **“Times New Roman”** տառատեսակը և **12 տառաչափը**:
2. Բոլոր լուսանկարները պետք է լինեն **JPG (JPEG)** ֆորմատով:
3. Այգու չափերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվի նույն փաստաթղթում ինչ այգու հիմադրման պատմությունը և մշակաբույսերի ընտրության հիմնավորումը: Փաստաթուղթը **չի կարող լինել 1 (մեկ) էջից ծավալուն**:
4. Միջառարկայական ուսուցման ծրագիրը **չի կարող լինել 3 (երեք) էջից ծավալուն**:
5. Լուսանկարների թվաքանակը **չի կարող լինել 25-ից (քսանհինգ) ավել**, ներառյալ՝
 - այգու լուսանկարներ՝ առավելագույնը 5
 - այգեգործության դասընթացին մասնակցող երեխաների լուսանկարներ՝ առավելագույնը 10
 - հավաքված բերքի լուսանկարներ՝ առավելագույնը 5
 - առողջարար ուտեստ պատրաստող երեխաների լուսանկարներ՝ առավելագույնը 5
6. Շարադրությունը **պետք է գրվի երեխաների կողմից և չի կարող լինել 1 (մեկ) էջից ծավալուն**: Ծնողները/ուսուցիչները կարող են օգնել երեխաներին տպել շարադրությունը:

Ծրագրի ողջ ընթացքում դպրոցները կարող են խրախուսել ծնողների, ավագ դասարանների աշակերտների, համայնքային կազմակերպությունների ներգրավվածությունը՝ Դպրոցական սննդի ծրագրի վերաբերյալ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:

Մրցանակ

Հաղթող դպրոցը կստանա դրամաշնորհ՝ 3000 (երեք հազար) ԱՄՆ դոլարի չափով, ավելի մեծ այգի հիմնելու կամ դպրոցական արտադրությունը մեծացնելու համար: Երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած դպրոցները կստանան արժեքավոր մրցանակներ (մրգերի և բանջարեղենի չորանոց, սառցարան՝ մթերքը պահպանելու համար):

Մրցույթը կիրականացվի երկու փուլով:

Փուլ 1. Դպրոցները պետք է ներկայացնեն մրցույթի մասնակցության հայտ (Հավելված 1):

Մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է 2021թ. մայիսի 1-ը:

Փուլ 2. Դպրոցները պետք է ներկայացնեն ծրագրի ամբողջական փաթեթը:

Ծրագրի փաթեթների ներկայացման վերջնաժամկետն է 2021թ. հոկտեմբերի 1-ը:

6 Ընտրող հանձնաժողովը կգնահատի ստացված նախագծերի փաթեթները և կհայտարարի *հաղթողներին մինչև 2021թ. նոյեմբերի 1-ը*:

Ընտրության չափանիշ

1. Կրթական բաղադրիչ (միջառարկայական ուսուցման ծրագիր) **(20 միավոր)**:
2. Այգու որակ (այգու ձևավորում, խնամք, պահպանում, մշակաբույսերի ընտրություն և օգտագործում) **(15 միավոր)**:
3. Ներգրավվածության մակարդակ (աշակերտների, ծնողների, համայնքների, տեղական գործարար շրջանակների մասնակցություն) **(10 միավոր)**:
4. Ծրագրի փաթեթի որակ (կոկիկություն, քերականություն, գեղեցիկ լուսանկարներ, ընդհանուր ստեղծարարություն) **(5 միավոր)**:

Ընտրող հանձնախումբ

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ՄԱԿ Պարենի համաշխարհային ծրագիր
- ՌԴ Ճյուղային սննդի ինստիտուտ
- «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սննդի և երեխաների բարեկեցության» գործակալություն
- ՄԱԿ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

Մասնակցության հայտերն անհրաժեշտ է ուղարկել ՌԴ Ճյուղային սննդի ինստիտուտ:

Կոնտակտային անձ՝ Մարինե Հարությունյան

Էլեկտրոնային փոստ՝
marine.harutyunian@hotmail.com

Բջջային հեռախոս՝
+37491291103



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՆԻ ԱՅԳԻ ՍՐՑՈՒՅԹԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Մարզ	
Համայնք	
Դպրոցի անվանումը	
Դպրոցի էլեկտրոնային փոստի հասցեն	
Տնօրենի ԱԱՀ	
Տնօրենի հեռախոսի համարը	
Դպրոցը ներկայումս ունի՞ այգի:	
Պլանավորում եք հիմնել մինի այգի:	
Դպրոցն ունի՞ այգեգործության/այգիներ հիմնելու փորձ:	
Եթե այո, խնդրում ենք հակիրճ մանրամասնել:	

Ամսաթիվ _____